16
ՀՈՒՆԻՍԻ
2020

Luys Լույս®

ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄՅՈՒՍ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ՝ ՀԱՄԱՁԱՅՆ «ԿՈՎԻԴ-19 ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ»

ՀԱՄԱՃԱՐԱԿԱՅԻՆ ԻՐԱՎԻՃԱԿԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԻ ՄՅՈՒՍ ԵՐԿՐՆԵՐՈՒՄ՝ ՀԱՄԱՁԱՅՆ «ԿՈՎԻԴ-19 ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ԳՆԱՀԱՏՄԱՆ ԶԵԿՈՒՅՑԻ»

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ 1
1. ԿԱՐԱՆՏԻՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ 2
2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ 2
3. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ 3
4. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ 3
5. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ 4
6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ 5
ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ 5

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

«Խորը գիտելիքների խումբը» (Deep Knowledge Group) հրապարակել է «ԿՈՎԻԴ-19 տարածաշրջանային անվտանգության գնահատման զեկույցը»[1], որտեղ ներկայացվում է աշխարհի 200 երկրներում կորոնավիրուսի հետևանքով ստեղծված իրավիճակը՝ անվտանգության վարկանիշը և սպառնալիքները: Զեկույցում հաշվի է առնվում երկրների տնտեսական, սոցիալական և առողջապահական կայունությունը, ինչպես նաև ուժեղ և թույլ կողմերը, հնարավորություններն ու սպառնալիքները՝ ԿՈՎԻԴ-19 համաճարակի համատեքստում: Սույն տեղեկանքում փորձել ենք առանձնացնել Հայաստանի համար առավել ուշագրավ տվյալները, ինչպես նաև համեմատել դրանք տարածաշրջանի մյուս երկրների տվյալների հետ:

Ընդհանուր առմամբ, զեկույցի հեղինակները 200 երկրները բաժանել են 4 զամբյուղների միջև՝ առաջին երկու զամբյուղներում ընդգրկելով լավագույն վարկանիշն ունեցող 40 երկրները՝ յուրաքանչյուրում 20-ական երկրներ, 3-րդ զամբյուղում ընդգրկելով 60 երկրներ՝ այդ թվում՝ Հայաստանը: Ամենավատ տվյալներն ունեցող 100 երկրները ընդգրկվել են 4-րդ զամբյուղում՝ ընդ որում դրանց մեծ մասը աֆրիկական, ասիական, լատինաամերիկյան և մերձավորարևելյան թույլ զարգացած կամ պատերազմական իրավիճակում գտնվող երկրներն են:

Այսպես, զեկույցում պատկերված անվտանգության վարկանիշային աղյուսակում Հայաստանը 484 միավորով զբաղեցրել է 81-րդ տեղը՝ զիջելով տարածաշրջանի բոլոր երկրներին: Ադրբեջանը 75-րդն է՝ 499 միավորով, Վրաստանը՝ 39-րդը (550 միավոր), Թուրքիան՝ 37-րդը (556 միավոր), Իրանը՝ 73-րդը (505 միավոր): Հետխորհրդային երկրների շարքում Հայաստանից վատ ցուցանիշներ ունեն միայն Մոլդովան, Ղրղզստանը, Ուզբեկստանը, Տաջիկստանը, Թուրքմենստանը:

ԱԼԳ երկրների շարքում Հայաստանը Մոլդովայից հետո (հանգրվանել է Հայաստանի հարևանությամբ և 483 միավորով զբաղեցնում է 82-րդ տեղը) ամենավատ ցուցանիշն ունի: ԱԼԳ անդամ մյուս երկրներից Բելառուսը 63-րդն է (523 միավոր), Ուկրաինան՝ 66-րդը (520 միավոր): Եվրոպական երկրների շարքում Հայաստանից վատ ցուցանիշ ունեն միայն 3 երկրներ՝ Մոլդովան, Ալբանիան, Հյուսիսային Մակեդոնիան:

Զեկույցում առանձին համեմատական վերլուծություն է ներկայացվում նաև 100 երկրներում տարբեր ոլորտներում գրանցած ցուցանիշների մասով: Անդրադառնանք այդ ոլորտներից յուրաքանչյուրին:

---

[1] COVID-19 Regional Safety Assessment, Big Data Analysis of 200 Countries and Regions COVID-19 Safety Ranking and Risk Assessment, Deep Knowledge Group, 06.2020, http://analytics.dkv.global/covid-regional-assessment-200-regions/full-report.pdf (այցելվել է 15.06.2020թ.):

1. ԿԱՐԱՆՏԻՆԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Այսպես, առաջին ոլորտը վերաբերում է կարանտինի արդյունավետությանը: Այն հաշվի է առնում այնպիսի տվյալներ, ինչպիսիք են կարանտինի մասշտաբը, դրա ժամանակացույցը, կարանտինը խախտելու համար քրեական (վարչական) պատիժները, տնտեսական աջակցությունը մեկուսացված քաղաքացիների համար, տնտեսական մատակարարման ցանցի սառեցումը, ուղևորությունների սահմանափակումները:

Այսպես, կարանտինի արդյունավետության ցուցանիշով Հայաստանը 74 միավորով 100 երկրների շարքում զբաղեցրել է նախավերջին՝ 99-րդ տեղը: Հայաստանին զիջում է միայն Հորդանանը՝ 2 միավորով: Ուշագրավ է, որ տարածաշրջանի մյուս երկրներից Վրաստանը 114 միավորով 26-րդն է, Ադրբեջանը՝ 92-րդը (87 միավոր), Իրանը՝ 81-րդը (91 միավոր), Թուրքիան՝ 28-րդը (114 միավոր): Հայաստանը այս ցուցանիշով զիջում է նաև ԱԼԳ տարածաշրջանի բոլոր երկրներին:

Այս տվյալները վկայում են այն մասին, որ Հայաստանը ձախողել է կարանտինը և գրանցել է ամենավատ ցուցանիշները: Մասնավորապես, սա վերահաստատում է փորձագետների այն պնդումները, որ կարանտինի մասշտաբները, ժամանակացույցը ընդհանուր առումով սխալ են ձևակերպվել և իրականացվել: Միաժամանակ այս ցուցանիշը արտացոլում է նաև կառավարության հասցեին հնչեցվող այն քննադատությունները, որ մեկուսացված քաղաքացիների տնտեսական աջակցության ծրագրերը եղել են անարդյունավետ և ոչ հասցեական:

2. ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅՈՒՆԸ

Կառավարման արդյունավետության տեսանկյունից հաշվի են առնում այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են անվտանգության և պաշտպանության առաջխաղացման մակարդակը, կառավարության կառուցվածքի արդյունավետությունը, համաճարակային պատրաստվածությունը, արագ արտակարգ մոբիլիզացիան, տնտեսական կայունությունը, օրենսդրության արդյունավետությունը:

Կառավարման արդյունավետության ցուցանիշով Հայաստանը 105 միավորով զբաղեցրել է 89-րդ տեղը: Այս ցուցանիշով ևս մեր երկիրը զիջում է տարածաշրջանի բոլոր երկրներին. մասնավորապես, Վրաստանը զբաղեցրել է 55-րդ տեղը (120 միավոր), Ադրբեջանը՝ 73-րդ տեղը (113 միավոր), Իրանը՝ 79-րդ տեղը (109 միավոր), Թուրքիան՝ 51-րդ տեղը (126 միավոր):

Այսինքն՝ վերոհիշյալ տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանը կորոնավիրուսի դեմ պայքարում նաև չափազանց վատ ցուցանիշներ է ունեցել կառավարման

արդյունավետության տեսանկյունից, ինչը և հանգեցրել է ստեղծված շատ բարդ համավարակային իրավիճակին:

3. ՄՈՆԻՏՈՐԻՆԳ ԵՎ ՀԱՅՏՆԱԲԵՐՈՒՄ

Այս ուղղությամբ տրվող գնահատականները հաշվի են առնում հետևյալ ցուցիչները՝ մոնիտորինգի համակարգերը և ճգնաժամերի կառավարումը, թեստավորման արդյունավետությունը, կառավարության վերահսկողության տեխնոլոգիան՝ մոնիտորինգի համար, ախտորոշման մեթոդների շրջանակը, տվյալների հուսալիությունն և թափանցիկությունը:

Այս ցուցանիշով Հայաստանը գտնվում է փոքր-ինչ ավելի բարվոք դիրքերում՝ 93 միավորով զբաղեցնում է 56-րդ տեղը, առաջ անցնելով տարածաշրջանի բոլոր երկրներից: Մասնավորապես, Թուրքիան 57-րդն է, Իրանը՝ 100-րդը, Վրաստանը՝ 66-րդը, Ադրբեջանը՝ 60-րդը: Այս ուղղությամբ համեմատաբար բարվոք դիրքերը հավանաբար պայմանավորված են մոնիտորինգի և վերահսկողության տեխնոլոգիաների կիրառման, այդ թվում՝ հեռախոսների տեղորոշման և այլ տվյալների հավաքագրման հանգամանքի հետ: Թեև խիստ կասկածելի է այդ միջոցառումների կիրառման արդյունավետությունը՝ հաշվի առնելով դրանց կիրառումից հետո վարակի տարածման տեմպերի կտրուկ ավելացումը, սակայն զեկույցում ամենայն հավանականությամբ հաշվի է առնովում այդ միջոցառումների իրականացման փաստը և ոչ այնքան արդյունավետությունը:

4. ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆԸ

Առողջապահական համակարգի պատրաստվածությունը գնահատելիս հաշվի են առնվել այնպիսի ցուցիչներ, ինչպիսիք են բուժանձնակազմի քանակն ու որակը, տեխնոլոգիական առաջընթացի մակարդակը, առողջապահության առաջընթացի մակարդակը, COVID-19 սարքավորումների առկայությունը, համաճարակաբանական համակարգի զարգացման մակարդակը, նոր առողջապահական ռեսուրսների մոբիլիզացումը:

Ուշագրավ է, որ այս ոլորտներում Հայաստանը զգալիորեն լավ ցուցանիշներ է արձանագրել՝ 76 միավորով զբաղեցնելով 34-րդ տեղը: Տարածաշրջանի երկրներից զիջում ենք միայն Վրաստանին, որը 79 միավորով 27-րդն է, իսկ ահա տարածաշրջանի մյուս երկրներից Ադրբեջանը 44-րդն է, Թուրքիան՝ 68-րդը, Իրանը՝ 86-րդը:

Այս ցուցանիշները ցույց են տալիս, որ Հայաստանում այսօրվա անմխիթար համաճարակային իրավիճակը ամենևին էլ պայմանավորված չէ առողջապահական համակարգի խնդիրների հետ: Համաձայն զեկույցի՝ առողջապահության ոլորտի

պատրաստվածության մակարդակով Հայաստանը ավելի լավ դիրքերում է գտնվում, քան նույնիսկ մի շարք զարգացած երկրներ, ինչպիսիք են Կանադան, Իտալիան, Մեծ Բրիտանիան և այլն:

Այսինքն, ի հեճուկս ներկայիս կառավարության գործողությունների՝ տարիների ընթացքում կատարված հսկայական աշխատանքի շնորհիվ Հայաստանի առողջապահական համակարգը կարողացել է հասնել պատրաստվածության բարձր աստիճանի: Որքան էլ առողջապահության գործող նախարարը խոսում է նախկինում ոլորտին տրվող նվազ ֆինանսավորման մասին՝ փորձելով այն ներկայացնել որպես ստեղծված իրավիճակի պատճառներից մեկը, միջազգային գնահատականները բոլորովին այլ բանի մասին են վկայում:

Ակնհայտ է, որ առողջապահական համակարգի բուժանձնակազմի քանակը և որակը, տեխնոլոգիական և առողջապահական առաջընթացի մակարդակը, համաճարակաբանական համակարգի զարգացման մակարդակը «հետհեղափոխական» կառավարության ձեռքբերումները չեն: Ավելին, վերջին 2 տարիների ընթացքում ոլորտում տեղի ունեցող կրճատումներն ու խժդժությունները զգալիորեն թուլացրել են համակարգը: Ինչևէ, նաև կայացած առողջապահական համակարգի շնորհիվ է, որ ԿՈՎԻԴ-19 տարածաշրջանային անվտանգության գնահատման զեկույցում Հայաստանը առհասարակ դուրս չի մնացել 100 երկրների շարքից, քանի որ այդ ցուցիչով ստացած միավորները զգալիորեն բարելավել են ընդհանուր գնահատականը:

5. ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ՃԿՈՒՆՈՒԹՅՈՒՆ

Տարածաշրջանային ճկունության գնահատման ցուցիչներն են՝ վարակի տարածման ռիսկը, մշակույթի առանձնահատկությունները և հասարակական կարգապահությունը, սանիտարական ժամանակակից մեթոդների մակարդակը, ժողովրդագրությունը, քրոնիկ հիվանդությունների մակարդակը, աշխարհաքաղաքական խոցելիությունը:

Տարածաշրջանային ճկունության ցուցանիշով Հայաստանը 80 միավորով զբաղեցնում է 60-րդ տեղը՝ տարածաշրջանի երկրներից զիջելով միայն Թուրքիային, որը 81 միավորով 48-րդն է: Իրանը 68-րդն է, Վրաստանը՝ 72-րդը, Ադրբեջանը՝ 89-րդը: Այս տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում ստեղծված համաճարակային բարդ իրավիճակը կապված չէ նաև արտաքին և տարածաշրջանային գործոնների հետ:

Ավելին, ի տարբերություն հարևան երկրների, Հայաստանը այս տեսանկյունից գտնվում է ավելի բարենպաստ միջավայրում, որի մասին բազմիցս բարձրաձայնել են նաև հայ փորձագետները: Երկու փակ սահմանի առկայությունը և տուրիստական մեծ

հոսքերի բացակայությունը ստեղծում էին համաճարակի բուռն տարածումը կանխելու համար ավելի նպաստավոր պայմաններ, քան մի շարք այլ երկրների պարագայում է, սակայն, ցավոք, այդ բնական առավելությունից ՀՀ իշխանությունները չկարողացան լիարժեքորեն օգտվել:

Այս գնահատականի ցուցիչներից մեկն էլ ներառում է մշակույթի առանձնահատկությունները և հասարակական կարգապահությունը: Վերջին շրջանում ՀՀ իշխանական քարոզչությունը ամեն կերպ փորձում է ստեղծված անբարենպաստ համաճարակային իրավիճակը պայմանավորել նաև վերոհիշյալ գործոնով՝ պարբերաբար նշելով, որ վարակի տարածումը հիմնականում պայմանավորված է բնակչության վարքագծով: Այս մասին են վկայում նաև վարչապետի ֆեյսբուքյան ֆլեշմոբերը: Այնինչ այս զեկույցի շրջանակներում Հայաստանին տրված գնահատականները հասարակական կարգապահության տեսանկյունից գոնե չեն զիջում տարածաշրջանի մյուս երկրների գնահատականներին:

6. ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՎԱԾՈՒԹՅՈՒՆ

Արտակարգ իրավիճակների պատրաստվածությանը վերաբերող գնահատականները տրվել են՝ հաշվի առնելով արտակարգ իրավիճակներում հասարակական ճկունությունը, արտակարգ ռազմական մոբիլիզացման փորձը, վերահսկողության հնարավորությունները, արտակարգ իրավիճակների նախկին փորձը:

Այս ցուցանիշով Հայաստանը 57 միավորով զբաղեցնում է 77-րդ տեղը՝ զիջելով հարևան բոլոր երկրներին: Իրանը 96 միավորով 20-րդն է, Թուրքիան՝ 79 միավորով 31-րդը, Վրաստանը՝ 43-րդը, Ադրբեջանը՝ 53-րդը:

Այս գնահատականը մի փոքր տարօրինակ է, եթե հաշվի առնենք, որ դրա հիմքերում դրված մի շարք ցուցիչներով Հայաստանը ունի կուտակված բավական մեծ փորձ: Մասնավորապես, Հայաստանում առկա է արտակարգ իրավիճակի և ռազմական մոբիլիզացիայի փորձ: Հավանաբար այստեղ նման ցածր ցուցանիշը կապված է եղել վերահսկողության հնարավորությունների ցածր մակարդակի հետ: Բացասական ազդեցություն կարող էր ունենալ նաև հասարակական ճկունությունը՝ հաշվի առնելով գործող կառավարության նկատմամբ աճող անվստահությունը՝ շնորհիվ վերջինիս իրարամերժ հայտարարությունների և գործողությունների:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Այսպիսով, զեկույցի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ կորոնավիրուսի հետևանքով ստեղծված իրավիճակի տեսանկյունից Հայաստանում առկա է բավական

բարդ դրություն: Հայաստանը գրանցած ընդհանուր ցուցանիշով զիջում է ոչ միայն տարածաշրջանի բոլոր երկրներին, այլև նախավերջինն է ԱԼԳ անդամ երկրների շարքում, իսկ եվրոպական երկրների շարքում առաջ է ընդամենը 3 երկրից:

Միաժամանակ, զեկույցի մանրամասն ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանը ձախողել է կարանտինը և այս տեսանկյունից գրանցել է ամենավատ ցուցանիշը՝ 100 երկրների շարքում զբաղեցնելով նախավերջին 99-րդ տեղը: Նման ցուցանիշը պայմանավորված է առաջին հերթին կառավարման ցածր արդյունավետությամբ, ինչը ևս արտացոլված է զեկույցում: Մյուս կողմից, թեև Հայաստանում իրականացվել են մարդկանց իրավունքները սահմանափակող բավական խիստ միջոցառումներ, ինչի արդյունքում համապատասխան ոլորտներին տրված գնահատականները համեմատաբար բարձր են, այնուամենայնիվ դրանք իրականացվել են բավական ցածր արդյունավետությամբ:

Ինչ վերաբերում է առողջապահական համակարգի պատրաստվածությանը և հակաճգնաժամային պայքարի արտաքին միջավայրին (տարածաշրջանային ճկունություն), ապա ինչպես նկատում ենք, զեկույցում այս ուղղություններով Հայաստանը գտնվում է բավականին բարվոք վիճակում: Նույնը կարելի է ասել նաև մշակույթի առանձնահատկությունների և հասարակական կարգապահություն մասին, որի տեսանկյունից Հայաստանը առնվազն չի զիջում հարևան երկրներին: Այլ հարց է, որ հասարակության վարքագծի վրա բացասական ազդեցություն է ունենում կառավարության նկատմամբ վստահության անկումն ու վերջինիս իրարամերժ հայտարարություններն ու գործողությունները:

Ամփոփելով զեկույցը՝ կարող ենք եզրակացնել, որ դրանում արտացոլված տվյալները գալիս են վկայելու, որ Հայաստանում ստեղծված համաճարակային ծանր իրավիճակը պայմանավորված է ոչ թե պետության ներուժի սահմանափակ լինելով, բնակչության վարքագծով և մշակույթով, այլ կարանտինի ձախողմամբ և անարդյունավետ կառավարմամբ: Նման իրավիճակը, ինչպես նաև վարակի դեմ ձախողված պայքարի պատասխանատվությունը բնակչության վրա գցելու փորձերը ավելի են խորացնում առանց այն էլ մտահոգիչ պատկերը, որը ակնհայտ արտահայտված է նաև տարբեր վիճակագրական տվյալներում:

Ըստ Worldometer կայքի տվյալների՝ Հայաստանը հունիսի 11-ի դրությամբ 1 մլն բնակչության հաշվով վարակվածների ցուցանիշով աշխարհում զբաղեցնում էր 19-րդ տեղը՝ գերազանցելով նույնիսկ կարանտին չհայտարարած Շվեդիային և համաճարակի մեկնարկին աղետալի դրության մեջ հայտնված Իտալիային: Նույն աղբյուրի համաձայն 1 մլն բնակչության հաշվով կորոնավիրուսից մահացածների ցուցանիշով Հայաստանը զբաղեցրել է 33-րդ տեղը՝ գրանցելով ավելի վատ ցուցանիշ, քան, օրինակ՝ Թուրքիան, կարանտինից հրաժարված Բելառուսը և այլն: Եվ սա այն

պարագայում, երբ բնակչության թվով Հայաստանը նույն աղբյուրի համաձայն աշխարհում 135-րդն է: Ավելին, կայքում առանձին ներկայացվում են նաև Ասիա աշխարհամասի տվյալները, որոնց համաձայն Հայաստանը 49-երկրների շարքում 1 մլն բնակչության հաշվով մահացության ցուցանիշով զբաղեցնում է 2-րդ ամենավատ տեղը՝ զիջելով միայն Իրանին, իսկ վարակվածության ցուցանիշով 5-րդն է[2]:

Վերոհիշյալ ցուցանիշները ևս մեկ անգամ վկայում են, որ համաճարակային տեսանկյունից Հայաստանը հայտնվել է ծանրագույն իրավիճակում: Քանի որ զեկույցի վերլուծությունից հնարավոր է դառնում որոշակի պատկերացում կազմել նաև այդ իրավիճակի առաջացման պատճառների և հանգամանքների մասին, հարկավոր է անհապաղ քայլեր ձեռնարկել դրանք շտկելու և երկրի զարգացման բնականոն տեմպը վերականգնելու ուղղությամբ:

[2] COVID-19 CORONAVIRUS PANDEMIC, Reported Cases and Deaths by Country, Territory, or Conveyance, WORLDOMETER, https://www.worldometers.info/coronavirus/ (այցելվել է 15.06.2020թ.):

«ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառմամբ հրապարակված նյութը պաշտպանված է ՀՀ օրենսդրությամբ և միջազգային համաձայնագրերով: Հրապարակված նյութի բոլոր իրավունքների բացառիկ իրավատերը «ԼՈՒՅՍ» հիմնադրամն է:

*Նյութի ամբողջական կամ դրանից **քաղվածքների** վերարտադրումը թույլատրվում է իրականացնել միայն «ԼՈՒՅՍ հիմնադրամ» գրառման և համապատասխան ակտիվ հղման տեղադրման պայմանով՝ պահպանելով «ԼՈՒՅՍ» հիմնադրամին պատկանող նյութերի օգտագործման կարգը:*